

«ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱՊՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐԻ» ԵՎ ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արտակ Ղազարյան

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ասպիրանտ

Սույն հոդվածում կքննարկենք «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցությունը՝ փորձելով պարզել՝ արդյոք դրանք ունեն ընդհանուր արմատներ, թե մեկը մյուսից բոլորովին անկախ ինստիտուտներ են:

Մեր առջև դրված հարցերի պատասխանը փնտրելիս անհրաժեշտ ենք համարում.

1. Ներկայացնել «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի առաջացման պատճառներն ու նշանակությունը հիմնավորող տեսությունները:

2. Պարզել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ծագումն ու նպատակները:

3. Կատարել հիմնավոր եզրահանգումներ՝ այդ ինստիտուտների միջև «ներքին կապի» առկայության կամ բացակայության մասին:

4. Վերը նշված եզրահանգումների լույսի ներքո վերլուծել Վճռաբեկ դատարանի 2016 թ. մարտի 30-ի ԵԱԲԴ/0217/01/14 գործով կայացրած որոշման իրավական դիրքորոշումները:

«Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը

Ո՞րն է «մասնավոր մեղադրանքի գործերի»¹ էությունը: Եթե փորձենք հարցին տալ պարզ ու հակիրճ պատասխան, ապա պետք է արձանագրենք, որ դրա էությունը հանգում է նրան, որ հանցագործությունից տուժած անձի կամքը որոշիչ նշանակություն է ունենում՝

– որոշակի հանցագործություններով քննություն սկսելու կամ չսկսելու հարցը որոշելիս. օրենքով սահմանված դեպքերում քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցանքից տուժած անձի բողոքի առկայության պարագայում, եթե, իհարկե, առկա են քրեական գործ հարուցելու բավարար հիմքերը, և բացակայում են քրեական գործ հարուցելը բացառող մյուս հանգամանքները,

– հարուցված քրեական գործով քրեական հետապնդման հետագա իրականացման հարցը որոշելիս². բոլոր այն դեպքերում, երբ մասնավոր մեղադրանքի

¹ Այս եզրույթը մենք օգտագործում ենք լայն իմաստով՝ նկատի ունենալով նաև այսպես կոչված մասնավոր-հանրային մեղադրանքի գործերի շրջանակը, որոնցով միայն հետապնդման հարուցումն է կախվածության մեջ դրվում մասնավոր անձի (տուժած անձի) կամքից, սակայն գործի հետագա քննությունը արդեն դուրս է մնում վերջինիս «տնօրինությունից»:

² Այս կանոնը չի գործում «մասնավոր-հանրային» մեղադրանքի գործերի դեպքում: Ի տարբերություն որոշ երկրների՝ ՀՀ քր. դատ. օր.-ը հրաժարվեց «մասնավոր-հանրային մեղադրանքի գործերի» ինստիտուտից:

գործերով տուժողը հաշտվում է կասկածյալի կամ մեղադրյալի հետ (բողոքը հետ է վերցվում), ապա կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվում է (տե՛ս ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ, 36-րդ, 183-րդ հոդվածներ):

Պետք է ասել, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտն ունի հարյուրամյակների պատմություն: Որոշ հեղինակներ դրա ծագման բնօրրան են համարում հին գերմանական իրավունքը¹, մյուսները ժամանակագրական առումով գնում են ավելի հետ՝ այդպիսի գործերի տարրեր նշմարելով դեռևս հռոմեական իրավունքում²:

Այսպես, օրինակ, մինչհեղափոխական գիտնական Լ. Տաուբերը, հետազոտելով հռոմեական իրավունքին հայտնի մի շարք հանցագործություններ, եզրահանգում է, որ դրանցից ամուսնական անհավատարմությունը (adulterium) և երեխային փոխելը (suppositio partus) մասնավոր մեղադրանքի գործեր են (հեղինակի տերմինաբանությամբ՝ «ոչ պաշտոնական հանցագործություններ»):

«Այն, որ այդ հանցագործությունները (այսինքն՝ ամուսնական անհավատարմությունը և երեխային փոխելը – Ա.Ղ.) սովորական delicta privata չեն, այլ իսկական ոչ պաշտոնական հանցագործություններ են, երևում է նրանից, որ դրանց վրա ծանր քրեական պատիժներ են տարածվում (ներառյալ մահապատիժ), և որ այդ արարքները հետապնդվում են ոչ թե քաղաքացիական, այլ քրեական դատարանի կողմից...»³:

«Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի հետագա զարգացումը բաժին է ընկնում Գերմանիայում ռեֆորմացիայի շրջանին և հիմնականում պայմանավորված է 1532 թ. հանրահայտ Կառոլինայի (Constitutio Criminalis Carolina) «ծնունդով»: Դրանում արդեն ընդլայնվում է «մասնավոր մեղադրանքի գործերի» շրջանակը, և ներառվում են մի շարք այլ հանցագործություններ, ինչպիսիք են, օրինակ, կնոջն առևանգելը, բռնաբարությունը, ընտանիքում կատարված գողությունը:

Նկատենք, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի ծագման և դրա հիմնավորման հարցերը դեռևս 1800-ական թվականներին ակտիվորեն քննարկել են ինչպես եվրոպացի (Ֆ. Լիստ, Ֆ. Հելի), այնպես էլ ռուս գիտնականները (Ի. Ֆոյնիցկի, Ն. Ռոզին, Լ. Տաուբեր, Ա. Ֆոն-Ռեզոն):

19-րդ դարի գիտական միտքը մշակել էր «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը մեկնաբանող երեք տեսություններ:

Սկզբնական շրջանում տարածված է եղել այսպես կոչված «մասնավոր դելիկտի» տեսությունը: Այն «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը բացատրում էր նրանով, որ որոշ հանցագործություններ առավելապես վնասում են հանցագործությունից տուժած անձին և փաստացի չեն վնասում, կամ, ավելի ճիշտ, այնքան չնչին վնաս են հասցնում հանրությանը, որ այդպիսի

¹ Տե՛ս, օրինակ, **Головко Л. В.**, Альтернативы уголовному преследованию в современном праве. –СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002, էջ 446:

² Տե՛ս **Фон-Резон А. К.**, О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. СПб., 1882, էջ 13: Գերմանացի գիտնականներից ոմանք նույնպես «ոչ պաշտոնական հանցագործությունների» ծնունդը տեսնում են հռոմեական իրավունքում: Տե՛ս **Тaubер Л. Я.**, Жалоба потерпевшего при преступлениях неофициальных. Харьков: Тип. и лит. М. Зильберг и сыновья, 1909, էջեր 79-87:

³ **Тaubер Л. Я.**, նշվ. աշխ., էջ 87:

հանցագործությունների քննությունը և դրա հետագա ընթացքը կախվածության մեջ պետք է դրվեն դրանից տուժած անձի կամքից:

Օրինակ, գերմանացի գիտնական Հ. Ջաքարիան հանգում է հետևության, որ այդպիսի հանցագործություններով պատիժը պետք է ունենա ոչ թե պետությանը, այլ տուժողին բավարարելու (Privatsatisfaction) նպատակ, որը, հնարավոր է, դիմեր վրեժխնդրության, եթե բացակայեր պետական պատիժը¹:

Ու թեև դեռևս մեկ դար առաջ լույս տեսած գրականության մեջ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը պայմանավորող այս տեսությունը քննադատության է արժանացել ու դիտարկվել իբրև անախրոնիզմ (ժամանակավրեպություն), այնուամենայնիվ պետք է ընդգծենք, որ հենց այս տեսությունն է խորը ազդեցություն ունեցել եվրոպական մի շարք երկրների օրենսդրությունների վրա և պահպանվել մինչ 19-րդ դարի առաջին կեսերը:

Նույնիսկ ներկա ժամանակներում շատ դեպքերում կարող ենք իրավաբանության ոլորտում հանդիպել արտահայտությունների, որոնք ակնհայտորեն այս տեսության ազդեցության դրսևորումներ են:

Այսպես օրինակ՝ Վճռաբեկ դատարանն իր ԵԱՔԴ/0217/01/14 որոշման մեջ արձանագրել է, «... որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտները համապատասխանաբար «անձ և պետություն» ու «անձ և տուժող» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են» (այս և հետագա ընգծումները մերն են - Ա.Ղ.): Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արձանագրում է, որ քրեաիրավական վեճ կարող է առաջանալ անձի և տուժողի միջև, և այդ քրեաիրավական վեճի հաղթահարմանն է ուղղված մասնավոր մեղադրանքի ինստիտուտը²:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշմանը մոտ տեսակետ մեր ժամանակներում արտահայտել է նաև դատավարագետ Ն. Կովտունը, որը մասնավորապես նշել է. «Իրականում քրեաիրավական հարաբերությունը այս իրավիճակում ծագում և զոյություն է ունենում ոչ թե «պետություն-հանցագործ», այլ «տուժող-հանցագործ» սուբյեկտային կազմով... պետությունը... չունի և չի էլ կարող ունենալ իրավական պահանջներ հանցանք կատարած անձի նկատմամբ, քանի որ նրա իրավունքներն ու շահերը այստեղ չեն խախտվել, իսկ վիճելի իրավահարաբերությունները իրեն չեն պատկանում»³:

Երկրորդ տեսությունը, որը փորձ էր անում բացատրել «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը, իրավաբանական գրականության մեջ ստացել է «իդեալական արժեքի տեսություն» անվանումը (теория идеального блага):

Նշված տեսության վառ ներկայացուցիչներից Ա. Կիրենհեյմը ժամանակին նշել է, որ «...հանրորեն վտանգավոր հակաօրինական արարքների դասակարգումը պաշտոնական և ոչ պաշտոնական հանցագործությունների հիմնվում է այն

¹ St´u Zachariä H. A., Von den Verbrechen, welche nur auf Antrag des Verletzten verfolgt und bestraft werden sollen, 1847: Մեջբերումն ըստ Таубер Л. Я., նշվ. աշխ., էջեր 339-340:

² Նկատենք, որ քննարկվող որոշման մեջ Վճռաբեկ դատարանը չի փորձում տարանջատել «մասնավոր մեղադրանքի» և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները՝ այդ երկուսը դիտարկելով միասնության մեջ:

³ St´u Ковтун Н. Н., Соотношение частных и публичных начал в уголовном судопроизводстве РФ: время выбора //Государство и право. 1995. № 11, էջ 69:

արժեքների ներքին բնույթի վրա, որոնք խախտվում են հանցավոր արարքով»¹: Նա նկատում է, որ յուրաքանչյուր հակաօրինական արարք ուղղված է ինչ-որ արժեքի դեմ, որն էլ իր հերթին լինում է կամ նյութական, կամ իդեալական: Հեղինակն այն կարծիքին է, որ նյութական արժեքները անհրաժեշտ են «արտաքին գոյության» համար, իսկ իդեալական արժեքները ներառում են անձի ներքին կյանքը:

Ա. Կիրիենհեյնը նյութական արժեքները դասակարգում է երկու խմբի՝ առաջնային նյութական արժեքներ և նյութական-ձեռքբերովի արժեքներ: Մարդու կյանքը, ֆիզիկական անձեռնմխելիությունը նա դիտարկում է իբրև առաջնային նյութական արժեքներ, իսկ ահա ձեռքբերովի նյութական արժեքներ է համարում այն բոլոր իրերը, կենցաղային առարկաները, որոնք անհրաժեշտ են մարդկանց բնական պահանջույնները բավարարելու համար:

Ինչ վերաբերում է իդեալական արժեքներին, ապա նա դրանց շարքին է դասում ազատությունն ու արժանապատվությունը, որոնք մարդուն տրվում են ի ծնե: Իբրև ձեռքբերովի «իդեալական արժեք» դիտարկվում էր այն, ինչ «առաջանում է մտավոր գործունեության շնորհիվ և հանդիսանում մտավոր կարողություն»²:

Իդեալական արժեքի տեսության մեխն այն է, որ բոլոր դեպքերում, երբ հանցանքն ուղղվում է այդ իդեալական արժեքների դեմ, ապա պետությունը իրավասու չէ առանց տուժած անձի պահանջի ի պաշտոնե ձեռնամուխ լինել գործի քննությանը, քանի որ պետությունը «չունի այնպիսի նուրբ զգայարաններ», որոնցով հնարավոր լիներ ներխուժել առանձին անձանց ներքին կյանք և ճշտորեն որոշել իդեալական արժեքի վնասում եղե՞լ է, թե՞ ոչ (որպեսզի պարզվի՝ կատարված արարքը հանցավո՞ր է, թե՞ ոչ):

Պետության «այդ զգայարանների» բացակայությամբ պայմանավորված՝ իդեալական արժեքի վնասման գնահատումը թողնվում է տուժողին (եթե բողոքում է, ուրեմն՝ գտնում է, որ «իդեալական արժեքը» վնասվել է, եթե չի բողոքում, գտնում է, որ չի վնասվել)³:

Մասամբ այս տեսությամբ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը պայմանավորելով՝ Ֆ. Լիստն իր հերթին գրում է. «Այս կամ այն վարկեցողությունը կարող է աղջկա կողմից դիտարկվել կամ իբրև քնքանք, կամ մեծագույն վիրավորանք: Եվ կախված այդ հանգամանքից պետք է որոշվի, արարքը պետք է պատժվի՞, թե՞ ոչ»⁴:

¹ Մեջբերումն ըստ **Фон-Резон А. К.**, նշվ. աշխ., էջ 40:

² Նույն տեղում:

³ Կարելի է ներկայացված տեսության յուրահատուկ դրսևորում նկատել Վճռաբեկ դատարանի 2010 թ. դեկտեմբերի 23-ի ԱՎԴ1/0063/01/09 քրեական գործով կայացված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման մեջ: Ղատարանը, քննարկելով ինքնիրավչության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները, որոշման 13-րդ կետում արձանագրել է, որ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն ակտիվ վարքագծով՝ գործողությամբ: Ղատարանը որոշման մեջ նշում է. «Ընդ որում, անհրաժեշտ է, որ այդ գործողության իրավաչափությունը վիճարկվի անձի (կազմակերպության) կողմից: Տվյալ դեպքում որպես վիճարկում հարկ է հասկանալ շահագրգիռ անձի կողմից *իրավապահ մարմիններին համապատասխան հայտարարություն (դիմում, բողոք) ներկայացնելը*՝ ինքնիրավ գործողությունների արդյունքում իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ»:

⁴ Մեջբերումն ըստ **Тайбер Л. Я.**, նշվ. աշխ., էջ 353:

Երրորդ տեսությունը, որ փորձում է բացատրել «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի ծագումն ու նշանակությունը, գրականության մեջ ստացել է «տուժողին գթալու տեսություն» անվանումը (теория пощады потерпевшему):

Այս տեսության կողմնակիցները «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը հիմնավորում էին նրանով, որ որոշ հանցագործություններով իրականացվող քննությունն ու քրեական հետապնդումը կարող են ավելի մեծ վնաս հասցնել տուժողին, քան հանցագործությամբ նրան պատճառված վնասն է: Քրեական հետապնդմամբ այդպիսի «մեծ վնասի» հնարավորությունը նշված տեսության կողմնակիցները տեսնում էին նրանում, որ որոշ հանցագործություններ կարող են կատարվել ընտանիքում (այսինքն՝ հանցագործը և տուժողը կապված են լինում ամուսնաընտանեկան կապերով), կամ նույնիսկ եթե կատարվում են ընտանիքից դուրս, կարող են ընտանիքի «համերաշխության» քայքայման պատճառ դառնալ: Մեկ այլ դեպքում տեսաբանները գտնում էին, որ նշված շրջանակի հանցագործությունների քննությունը կարող է վնաս հասցնել հանցանքից տուժած անձի առանց այդ էլ խախտված արժանապատվությանը¹:

Այսպես, դեռևս 150 տարի առաջ Ա. Կվաչևսկին, անդրադառնալով «միայն բողոքի հիման վրա հետապնդվող հանցագործություններին», քրեական հետապնդման ընդհանուր կարգից շեղումը պայմանավորում էր նրանով, որ «այն կխախտեր ամենամուր կապերը... երբ կնոջ ամուսնական անհավատարմության վերաբերյալ գործը հարուցվեր առանց ամուսնու ցանկության, խայտառակ կլիներ հենց հանցագործությունից տուժողը, երբ բռնաբարությունն առանց կնոջ բողոքի վերածվեր քրեական հայցի, անձի արժանապատվությանը մի շարք հարվածներ կհասցվեին ...»²:

Այսպիսով, ներկայացված երեք հիմնական տեսություններով էին 1800-ականների գրականության մեջ փորձում բացահայտել «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի ծագումն ու մեկնել դրա էությունը:

Պետք է նշենք, որ եվրոպական երկրների (այդ թվում՝ նաև Ցարական Ռուսաստանի) պոզիտիվ իրավունքում մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը որոշված էր ոչ թե ներկայացված տեսություններից մեկը հիմք ընդունելով և մյուսները բացառելով, այլ երեքի էկլեկտիկ միասնությամբ³:

Պոզիտիվ իրավունքի այս մոտեցմանը համահունչ էին այդ ժամանակաշրջանի գիտնականների մի այլ խմբի հայացքները: Նրանք գտնում էին, որ անհնար է քննարկվող ինստիտուտի ծագումն ու նշանակությունը պայմանավորել այդ տեսություններից միայն մեկով (Ի. Ֆոյնիցկի⁴, Ա. Ֆոն-Ռեզոն⁵, Ֆ. Լիստ⁶ և այլք):

¹ Այստեղից էլ տեսության անվանումը՝ «տուժողին գթալու տեսություն»:

² **Квачевский А.** Об уголовном преследовании, дознании и предварительном исследовании преступлений по Судебным уставам 1864 года. Ч. 1: Теоретическое и практическое руководство.. СПб., 1866. С. 254.

³ «Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի առաջացման տեսությունների՝ եվրոպական տարբեր երկրների պոզիտիվ իրավունքի վրա թողած ազդեցության մասին տե՛ս **Լ. Տաուբերի** նշված աշխատությունը, էջեր 88-403: 1864թ. Ցարական քրեական դատավարության կանոնադրությամբ նախատեսված մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակին կարելի է ծանոթանալ այլ աղբյուրներից, տե՛ս, օրինակ, **Квачевский А.**, նշվ. աշխ., էջ 255:

⁴ Տե՛ս **Фойницкий И. Я.**, Курс уголовного судопроизводства. Т. II. СПб., 1910, էջեր 27-28:

⁵ Տե՛ս **Фон-Резон А. К.**, նշվ. աշխ., էջ 57:

⁶ Տե՛ս **Таубер Л.Я.**, նշվ. աշխ., էջ 361:

Այս առնչությամբ պետք է արձանագրենք, որ ներկայացված երեք տեսությունները իրենց արդիականությունը չեն կորցել մինչ օրս¹:

Այսպիսով, եթե փորձենք ընդհանրացնել, ապա պետք է նկատենք, որ հարյուրամյակների պատմություն ունեցող «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի առաջացման պատճառները հիմնականում բացատրվում էին արարքի հանրային ցածր վտանգավորությամբ, տուժած անձի գիտակցումով արարքի հանցավորությունը պայմանավորելու և տուժողին զբալու, նրա վիճակը քրեական վարույթով էլ ավելի չբարդացնելու ձգտումով:

Ընդ որում բոլոր դեպքերում այդ հանցագործություններով քրեական վարույթի (քրեական հետապնդման) *սկիզբը* (որոշ դեպքերում նաև հետագա ընթացքը) *կախվածության մեջ էր դրվում հանցանքից տուժած անձի կամքից*:

Պետք է արձանագրենք նաև, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտն արտացոլված էր ոչ միայն 1864թ. քրեական դատավարության կանոնադրությունում (որի մասին նշվեց վերևում), այլ նաև ՀՍՀ 1923 թ. քր. դատ. օր.-ում (4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, 10-րդ, 11-րդ հոդվածներ)², 1961 թ. քր. դատ. օր.-ում (5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետեր, 102-րդ հոդված)³, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում (33-րդ հոդվածի 2-րդ մաս, 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետեր, 36-րդ հոդված, 183-րդ հոդված)⁴:

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտ

2. Բեկարիայի այն հանրահայտ դատողությունը, որ հանցագործությունը կանխելու առավել արդյունավետ միջոցը ոչ թե պատժի խստությունն է, այլ դրա անխուսափելիությունը, իր արդիականությունը չի կորցրել նաև մեր օրերում:

Ականավոր մտածողի այս խոսքերն իրենց խոր հետքը թողեցին խորհրդային և հետխորհրդային քրեական իրավունքի պատժի (իսկ այնուհետև արդեն

¹ Նկատենք, որ եթե «մաքուր» տեսքով ներկայացված երեք տեսությունները խորհրդային և հետխորհրդային գրականության մեջ իրենց «համակիրները» չեն գտել, ապա երեք տեսությունների «կոմբինացված» մոտեցումը մեծ տարածում է ունեցել և այսօր էլ ունի մերօրյա իրավաբանական գրականության մեջ: Տե՛ս, օրինակ, **Катъкало С. И., Лукашевич В. З.**, Судопроизводство по делам частного обвинения. Л., издательство Ленинградского университета, 1972, էջեր 44-45; **Головачук О. С.**, Частное обвинение в уголовном процессе: дис...канд. юрид. наук. Екатеринбург, 2001, էջեր 31-33; **Ретунская Т. П.**, Защита частного интереса в уголовном процессе Российской Федерации: дис. ... канд. юрид. наук. СПб., 2005, էջեր 48-49:

² Ի դեպ, 10-րդ հոդվածում թվարկված էին այն հանցագործությունների շրջանակը, որոնցով մեղադրյալի և տուժողի հաշտության պարագայում գործը ենթակա էր կարճման (այլ կերպ ասած «մաքուր» մասնավոր մեղադրանքի գործերը), իսկ 11-րդ հոդվածում այն հանցագործությունների շրջանակը, որոնցով քրեական հետապնդման հարուցումն էր միայն կախվածության մեջ դրվում հանցանքից տուժած անձի բողոքից և ոչ թե գործի հետագա ընթացքը (այստեղ տեղ են գտել այսպես ասած «մասնավոր-հանրային» մեղադրանքի գործերը):

³ Այստեղ նույնպես առկա է տարբերակված մոտեցում. թվարկված են հանցագործություններ, որոնցով ինչպես գործի հարուցումը, այնպես էլ դրա հետագա ընթացքն են կախվածության մեջ դրվում հանցանքից տուժած անձի կամքից, սակայն առկա է նաև հանցագործություն, որի դեպքում մեղադրյալի և տուժողի հաշտությունը չի հանգեցնում գործի պարտադիր կարճման:

⁴ Ի տարբերություն նախորդ երկու՝ 1923 թ. և 1961 թ. քր. դատ. օր.-երի՝ ՀՀ ներկայիս քր. դատ. օր.-ը հրաժարվեց «մասնավոր-հանրային մեղադրանքի գործերի» ինստիտուտից:

պատասխանատվության) անխուսափելիության սկզբունքի ձևավորման գործում, որոնց ուղղակի հետևանքն էր սկզբում «հանցանք-պատիժ», ապա՝ «հանցանք-քրեական պատասխանատվություն» երկձյուղումը:

Սակայն ժամանակը վեր հանեց հանցագործությանը մեխանիկորեն պատժով կամ պատասխանատվությամբ արձագանքելու այս մոտեցման թերությունները: Գիտության մեջ ընդգծվեց նաև այդպիսի մեխանիկական մոտեցման վնասակարությունը (եթե, օրինակ, այդպիսի պատասխանատվության էր ենթարկվում այն անձը, ով քրեական օրենքը պատահաբար էր խախտել ու իր արարքով հանրությանը լուրջ վնաս չէր հասցրել)¹:

Ստեղծվում էր մի բարդ իրավիճակ. եթե պետությունը հանցագործությանը արձագանքում էր անձին մեխանիկական պատասխանատվության ենթարկելով, առաջանում էին լուրջ վտանգներ (չէր իջնում նաև հանցավորության մակարդակը):

Բայց մի քանի անգամ ավելի վնասակար կլինեի հանցագործությունն ընդհանրապես անարձագանք թողնելը (նորից հիշենք Բեկարիային):

Ի՞նչ անել, և արդյո՞ք կար այլընտրանք...

Այս առումով հիշատակման են արժանի Լ. Գոլովկոյի այն խոսքերը, որ «...եթե 19-րդ դարի վերջին քրեական իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ծաղկումը ուղեկցվում էր «դասականների» հասցեին այն կշտամբանքներով, որ վերջիններս չկարողացան ոչինչ անել հանցագործությունների աճի հետ, ապա այժմ այդ նույն տխուր ճակատագրին արժանացան «սոցիոլոգները», որոնք այդ գործում ևս մեծ հաջողություններ չարձանագրեցին... պատժի ավանդական հայեցակարգի ձգնաժամը գիտության մեջ և որպես հետևանք նաև պոզիտիվ իրավունքում առաջ բերեց նոր գաղափարներ, որոնք վերաբերում էին հանրության և պետության կողմից հանցագործություններին և հիմնականում ոչ մեծ ծանրության հանցագործություններին այլ կերպ արձագանքելուն»²:

Ելքը գտնվեց հանցագործությանը *արձագանքել ոչ ավանդական մեթոդներով*. ավանդական քրեական հետապնդմանը փոխարինման եկան դրա այլընտրանքները:

Հենց այն գաղափարը, որ որոշակի հանգամանքների առկայության դեպքում քրեական օրենսդրության խնդիրներին և պատժի նպատակներին կարելի է հասնել ավելի արդյունավետ կերպով և սոցիալական նվազագույն միջոցների գործադրմամբ, դարձավ քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական ինստիտուտի առաջացման տեսական հիմքը³:

Այդպիսով, քրեական քաղաքականության այդ «պահանջմունքների» բավարարման համար արդեն 20-րդ դարի կեսերին խորհրդային իրավունքում «ծնվեց» քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը:

Նկատենք, սակայն, որ 1961 թ. ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 4-րդ գլխում, որտեղ թվարկվում էին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը,

¹ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (ընդհանուր մաս, 6-րդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով), խմբ.՝ **Գ.Ս.Ղազինյան**, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2007, էջ 463:

² **Головко Л. В.**, նշվ. աշխ., էջեր 12-13:

³ Ст. u Российское уголовное право: Общая часть /учебник //под. ред. докт. юрид. наук. проф. **Л.В. Иногамовой-Хегай, В.С.Комиссарова, А.И.Папота**, Т.1, 2-е издание, переработанное и дополненное, М., 2007, էջ 416:

քրեական պատասխանատվությունից ազատելու՝ տուժողի հետ հաշտվելու հիմքը տեղ չգտավ:

Բայց արդեն 2003 թ. ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում ամրագրվեց քրեական պատասխանատվությունից ազատելու վերոնշյալ հիմքը. «Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը *կարող է* ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա *հաշտվել է* տուժողի հետ և *հատուցել* կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

Այս առումով միանգամայն իրավացի է հնչում ԵՊՀ-ի քրեագետների այն դիտարկումը, որ «Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող քրեաիրավական նորմը նորոյթ է հայկական քրեական իրավունքում»¹:

Այսպիսով, միայն վերջին ժամանակներում տեղի ունեցած փոփոխությունների շնորհիվ ժամանակակից քրեական քաղաքականության վերափոխմամբ պայմանավորված, հայկական քրեական իրավունքում որպես հանցագործությանն արձագանքելու այլընտրանքային միջոց ձևավորվեց քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը՝ իր բազմաթիվ տարատեսակներով:

Դրանցից մեկն էլ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելն է, որտեղ «հանցագործությանն այլընտրանքային ձևով արձագանքը» դրսևորվում է մասնավորապես հանցանք կատարած անձի և տուժողի միջև ծագած վեճի ու դրա հետևանքների հարթման մեխանիզմներ ստեղծելով²:

Եզրահանգումներ

«Մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների ծագման ու նշանակության ուսումնասիրումը թույլ է տալիս մեզ արձանագրելու, որ դրանք միմյանցից տարբերվում են ծագումնաբանությամբ (ծագման հիմքերով), նպատակներով, ինչպես նաև ծագման ժամանակաշրջանով («մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը, ի տարբերություն տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի, հարյուրամյակների պատմություն ունի, երկրորդը համեմատաբար նոր երևույթ է), հետևաբար դրանք մեկը մյուսից անկախ ինստիտուտներ են: Սակայն, այդուհանդերձ, դրանցում առկա է ընդհանուր տարր՝ «կողմերի հաշտությունը», որը երկու ինստիտուտների միջև «ներքին կապի» առկայության «խաբկանք» է ստեղծում: Վերջինս զարգանալու պարարտ հող ուներ. բանն այն է, որ խորհրդային իրավունքում գերիշխել է, իսկ հետխորհրդային իրավունքում շարունակում է իր ուժեղ ազդեցությունը պահպանել քրեական դատավարությունն ու քրեական իրավունքը «ձև և բովանդակություն» հարաբերակցության մեջ դիտարկելու մոտեցումը:

¹ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (ընդհանուր մաս, 6-րդ հրատարակություն, փոփոխություններով և լրացումներով), նշվ. աշխ., էջ 472:

² Դրանով տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը խիստ մոտենում է Արևմուտքին հայտնի «մեղիացիային»: Մոտենում, բայց չի նույնանում դրա հետ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Головко Л.В.**, նշվ. աշխ., էջեր 373-377:

Դա հատկապես խորհրդային իրավունքում կարող էր պայմանավորված լինել Կ. Մարքսի այն դատողությամբ, թե «դատավարությունն ու իրավունքը այնքան ամուր են փոխկապակցված, ինչպես, օրինակ, կենդանիների և բույսերի ձևերը՝ կենդանիների մսի և արյան հետ: Միևնույն ոգին պետք է ոգեշնչի դատավարությանն ու օրենքներին, քանի որ դատավարությունը օրենքի կենսածնն է...¹»:

«Ձևի և բովանդակության» այսօրինակ մոտեցումից էլ տրամաբանորեն բխեցվում էր քրեական դատավարության «կախվածությունը» քրեական իրավունքից, և ամեն դատավարական ինստիտուտի համար փորձ էր արվում «նյութական հենք» կառուցել²:

Նման մթնոլորտում երկու տարբեր ինստիտուտների «հաշտությամբ» պայմանավորված «արտաքին» նմանությունը գիտության մեջ սխալմամբ սկսեց դիտարկվել իբրև այս երկու ինստիտուտների մեջ եղած «ներքին կապ», իսկ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու նորաստեղծ ինստիտուտը՝ իբրև մասնավոր մեղադրանքի գործերի դատավարական ինստիտուտի նյութական հիմք³:

Այս հանգամանքն իր հերթին հանգեցրեց նրան, որ գիտության մեջ սկսեցին հնչել կարծիքներ, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը պետք է համապատասխանեցվի իր նյութական հենքին և վերջինիս հետ հակասության մեջ չլինի, ուստի և առաջարկություններ հնչեցին մասնավոր մեղադրանքի գործերը կարգավորող քրեադատավարական նորմերը լրացնել տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար նախատեսված նյութական օրենքի հատկանիշներով⁴:

Այս առումով միանգամայն համամիտ ենք դատավարագետ Լ. Գոլովկոյի այն տեսակետին, թե նման մոտեցումը կհանգեցներ «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի ինքնավարության ամբողջական հաղթահարմանը, հետևաբար կհանգեցներ այդ ինստիտուտի հիմնահատակ կործանմանը⁵:

Նույն ժամանակներում, սակայն, նկատվեց նաև հակառակ մոտեցումը. դատավարագետները տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատաս-

¹ Մեջբերված է ըստ **Строгович М.С.**, Уголовный процесс, Институт права академии наук СССР, изд-во НКЮ СССР, Москва, 1941, էջ 22:

² Մենք նպատակ չունենք քննության առնելու այս մոտեցման հիմնավորվածությունը, դրա թեր և դեմ կողմերը, սակայն նշված կոնտրաստում հիշատակման են արժանի անվանի մինչեղափոխական դատավարագետ Ն. Ռոզինի խոսքերը. «Ո՛չ քաղաքացիական, ո՛չ էլ քրեական իրավունքից են դատավարական հիմնական ինստիտուտները ստանում իրենց դիմագծերը»: Հեղինակն արձանագրում էր, որ, օրինակ, դատական քննության նախապատրաստության կամ ապացույցների և նման այլ հարցերը նույնպես ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ քաղաքացիական իրավունքի հարցեր չեն: Հետևաբար սխալ են այն պնդումները, թե «քրեական դատավարության ինստիտուտները իրենց արմատներով բխում են նյութական քրեական իրավունքի բնույթից»: Տե՛ս **Розин Н.Н.**, Уголовное судопроизводство. Пособие к лекциям (2-е издание, измененное и дополненное). - С.-Петербург, издание юридического книжного склада "Право", 1914, էջեր 10-11:

³ Տե՛ս, օրինակ, **Наумов А.В.**, Российское уголовное право. Курс лекций: Т.1. Общая часть, 4-е изд., перераб. и доп.-М.: Волтерс Клувер, М., 2007, էջ 613:

⁴ Տե՛ս **Кедников Н.Г.** Классификация преступлений по уголовному праву России. М., 2000, էջ 138, մեջբերված է ըստ **Головки Л.В.**, նշվ. աշխ., էջ 445:

⁵ Տե՛ս նույն տեղում:

խանաստվությունից ազատելու օրենսդրական նորմերը սկսեցին դիտարկել իբրև «մասնավոր-հանրային մեղադրանքի գործերի շրջանակի ընդլայնում»¹:

Այս առումով պետք է նորից ընդգծել, որ քննարկվող ինստիտուտները մեկը մյուսից *անկախ են, և դրանցից մեկի ազդեցությունը մյուսի վրա տարածելու ամեն մի փորձ կհանգեցնի այս ինստիտուտների ձևախեղմանը, և որպես հետևանք՝ անհնար կդարձնի դրանցից յուրաքանչյուրի համար իր ուրույն նպատակների հասնելը*:

Որ օրենսդիրը ՀՀ քր. օր.-ի 73-րդ հոդվածն ամրագրելիս չի ունեցել «մասնավոր մեղադրանքի գործերի» դատավարական ինստիտուտի համար նյութական հենք ստեղծելու նպատակ, երևում է հենց այն բանից, որ նշյալ դրույթը քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն է նախատեսում միայն այն դեպքում, երբ անձը կատարել է *ոչ մեծ ծանրության հանցանք*: Այնինչ մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը սահմանող ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում, բացի ոչ մեծ ծանրության հանցագործություններից, տեղ են գտել նաև միջին ծանրության հանցագործություններ:

Կարծում ենք, որ երկու ինստիտուտների տարբերակման հանգամանքով է պայմանավորված նաև օրենսդրի կողմից տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար ՀՀ քր. դատ. օր.-ում քրեական գործի կարճման առանձին հիմքի նախատեսումը (37-րդ հոդված²), ընդ որում՝ այդ հիմքի կիրառումը օրենսդիրը կախման մեջ է դնում վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունից:

Այլ կերպ ասած՝ օրենսդիրը, ճիշտ ընկալելով երկու ինստիտուտների էությունների տարբերությունը, դրանց իրացման համար նախատեսել է տարբերակված դատավարական կարգ (մասնավոր մեղադրանքի գործերով՝ իմպերատիվ կարճում պարտադրելով, մյուս դեպքում՝ վարույթն իրականացնող մարմնին լիազորելով հայեցողություն դրսևորել):

Կարծում ենք՝ այս ամենն աներկբա վկայում է այն մասին, որ քննարկվող ինստիտուտների տարբերակման հիմքում ընկած է ոչ թե դրանց իրականացման դատավարական կարգը, այլ դրանց էությունը, քանի որ դատավարական կարգը ածանցյալ նշանակություն ունի էության նկատմամբ:

Երկու խոսք ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման մասին

Քննարկվող ինստիտուտների³ հարաբերակցության հարցին իր որոշումներից մեկում⁴ անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը:

¹ Տե՛ս, օրինակ, Уголовный процесс. учебник для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция» / Под ред. В. П. Божьева. 3-е изд., испр. и доп. - М.: Спарк, 2002, էջեր 614-615:

² Եթե ընդունենք այն թեզը, որ տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի նախատեսմամբ օրենսդիրը ցանկացել է նյութական հենք ստեղծել մասնավոր մեղադրանքի ինստիտուտի համար, ապա պետք է որ օրենսդիրը քր. օր.-ի 73-րդ հոդվածի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար չնախատեսեր քրեական գործի կարճման առանձին հիմք, այլ գործի կարճումն իրականացվեր ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով:

³ Նկատենք, որ քննարկվող որոշման մեջ Վճռաբեկ դատարանը չի փորձում տարանջատել «մասնավոր մեղադրանքի» և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները՝ այդ երկուսը դիտարկելով միասնության մեջ:

⁴ ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ. մարտի 30-ի ԵԱԲԴ/0217/01/14 գործի վերաբերյալ որոշում:

Որոշման 15-րդ կետում, տարբերակելով երկու ինստիտուտները, Վճռաբեկ դատարանը նշում է, որ քր. օր.-ի 73-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքն ունի *նյութափրավական*, իսկ մասնավոր մեղադրանքի ինստիտուտը՝ *քրեադատավարական* բնույթ: Այնուհետև երկու ինստիտուտների տարբերության վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը որոշման 15.1 կետում հանգում է այն եզրակացության, որ «...հաշտության նյութափրավական ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածներ) *կիրառելի է միայն հանրային հետապնդման գործերով*, իսկ քրեադատավարական ինստիտուտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ և 183-րդ հոդված)՝ *մասնավոր հետապնդման գործերով*: Հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածները կիրառելի չեն մասնավոր հետապնդման այն գործերով, որոնք վերաբերում են ոչ մեծ ծանրության հանցագործություններին»:

Սակայն այստեղ պարզաբանման կարիք ունի ևս մեկ հարց. արդյո՞ք ինստիտուտների տարբերությունը մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակում ընդգրկված հանցագործություններով բացառում է անձին տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը:

Վճռաբեկ դատարանն իրավացիորեն ընդգծում է, որ մասնավոր մեղադրանքի գործերի պարագայում ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ քրեական գործը կարճելու **իմպերատիվ պահանջը** *իմաստագրկում է ՀՀ քր. օր.-ի 73-րդ հոդվածով նախատեսված մնացած պայմանների առկայության քննարկումը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների հայեցողության դրսևորումը* (տե՛ս որոշման 15.1 կետ), ինչն էլ իր հերթին բացառում է մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակում նախատեսված հանցագործությունների կատարման դեպքում անձին տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը:

Բացառում է... բայց մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Չէ՞ որ մասնավոր մեղադրանքի գործերով հաշտությունը հնարավոր է մինչ այդ պահը (քր. դատ. օր.-ի 183-րդ հոդված): Այսինքն, եթե մասնավոր մեղադրանքի գործերով հաշտությունը հնարավոր է մինչ դատական քննության փուլը (մինչ դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը), ապա անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը չի բացառվում նաև դատավարության հետագա փուլերում:

Նման պարագայում, եթե մինչև դատարանի՝ դատավճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալու պահը մասնավոր մեղադրանքի գործերով նախատեսված հանցագործություններով տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատել հնարավոր չէ (հաշվի առնելով իմպերատիվ պահանջի առկայությունը), ապա ամենևին էլ չի բացառվում այս ինստիտուտի իրացման հնարավորությունը քրեական դատավարության հետագա փուլերում, երբ արդեն անհնար է դառնում մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի վարույթի կարճումը (չէ՞ որ արդեն բացակայում է «խոչընդոտող» իմպերատիվ պահանջը): Այլ կերպ ասած՝ եթե երկու ինստիտուտների կիրառման դատավարական կարգի տարբերությունը տեխնիկապես անհնար է դարձնում մինչ առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելու համար

խորհրդակցական սենյակ հեռանալու պահը տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման հնարավորությունը, ապա արդեն դրանից հետո ոչինչ չի խանգարում մասնավոր մեղադրանքի գործերով նախատեսված հանցագործություններով անձին քրեական պատասխանատվությունից՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով ազատելուն:

Ասվածն ուղղակիորեն բխում է քննարկվող ինստիտուտների *անկախությունից և ինքնավարությունից*: Հենց ինստիտուտների անկախությունն է, որ չի բացառում մյուս ինստիտուտի (տվյալ դեպքում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու) կիրառման հնարավորությունը, երբ մասնավոր մեղադրանքի գործերով (խոսքը վերաբերում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների փաստով հարուցված գործերին) դատական քննությանը հաջորդող փուլերում առկա են տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները:

Այս պարագայում անհասկանալի է Վճռաբեկ դատարանի դիրքորոշման տրամաբանությունը: Արդյո՞ք մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակում ընդգրկված ոչ մեծ ծանրության հանցագործություններով սկսում է չգործել քրեական օրենսդրության արդարության և մարդասիրության սկզբունքը, որի մասին քննարկվող որոշման 16-րդ կետում հիշատակում էր դատարանը:

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ է տալիս փաստելու «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների ինքնավար բնույթը և անկախությունը: Դրանց արտաքին նմանությունը չի կարող դիտարկվել իբրև այս երկու ինստիտուտների միջև առկա «գենետիկական կապ»։ Երկուսն էլ ունեն ծագման ինքնուրույն հիմքեր և ինքնուրույն նշանակություն, որոնցով էլ պայմանավորվում է դրանց իրացման՝ միմյանցից տարբերվող դատավարական կարգը:

Ընդ որում՝ եթե մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կարճման դատավարական կարգը բացառում է տուժողի հետ հաշտվելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը, ապա գտնում ենք, որ առաջին ատյանի դատարանի դատավճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալու պահից վերանում են այդ արգելքները:

Հետևաբար՝ քրեական դատավարության հետագա փուլերում, երբ առկա լինեն քննարկվող հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները, վարույթն իրականացնող մարմինը կարող է մասնավոր մեղադրանքի գործերով նախատեսված հանցագործություններով իրականացվող վարույթի շրջանակներում օգտվել անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իր լիազորությունից:

СООТНОШЕНИИ ИНСТИТУТОВ ДЕЛ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ И ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В СВЯЗИ С ПРИМИРЕНИЕМ С ПОТЕРПЕВШИМ

Артак Казарян

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

В статье рассматривается вопрос о соотношении институтов дел частного обвинения и освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. В свете теоретических взглядов, объясняющих происхождение и значение обсуждаемых институтов, рассматривается вопрос о внутренней связи между ними и подвергается критическому анализу правовая позиция, оформленная в решении Верховного суда по делу ԵԱԲԴ/0217/01/14.

THE CORRELATION BETWEEN THE INSTITUTES OF «PRIVATE PROSECUTION CASES» AND EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY ON THE BASIS OF RECONCILIATION WITH THE VICTIM

Artak Ghazaryan

*Postgraduate student of the Educational
Complex of the Police of the RA*

This article covers the correlation between the institutes of «private prosecution cases» and exemption from criminal liability on the basis of reconciliation with the victim. Based on the theoretical overview of the creation and significance of these two institutes the existence of inner relation between them is discussed and the legal statements of the case ԵԱԲԴ/0217/01/14 of the Court of Cassation are subjected to critical analysis.

Բանալի բառեր- մասնավոր մեղադրանք, մասնավոր մեղադրանքի գործեր, տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատել

Ключевые слова- частное обвинение, дела частного обвинения, освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим

Key words- private prosecution, private prosecution cases, exemption from criminal liability based on the reconciliation with the victim